ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՅՑԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԴՈՒՐՍԳՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄ ՏԱՆԸ ՉԲՆԱԿՎՈՂ IHSS/WPCS ԽՆԱՄԱԿԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ներկայացվում է՝

Կալիֆորնիայի Սոցիալական Ծառայությունների Վարչության (CDSS) CMIPS և Համակարգերի հզորացման մասնաճյուղի կողմից

2023

CDSS Adult Programs Division

ARMENIAN

Ինչի՞ մասին ենք խոսելու

- Փոփոխություններ EVV համակարգում
- EVV համակարգի թարմացումների իրականացում
- Գրանցում/դուրսգրում՝ օգտագործելով Հեռախոսային ժամաթերթի համակարգը (TTS)
- Ժամաթերթի ճշգրտում

Փոփոխություններ EVV համակարգում

Medicare և Medicaid ծառայությունների դաշնային կենտրոնը (CMS) պահանջում է, որ EVV-ն յուրաքանչյուր աշխատանքային օրվա սկզբում և վերջում էլեկտրոնային եղանակով ստուգի Տնային օժանդակության ծառայությունների (IHSS) և Անձնական խնամքի այլընտրանքային ծառայություններ (WPCS) ծրագրի խնամակալների աշխարհագրական դիրքը:

EVV համակարգը թարմացվել է դաշնային պահանջներին համապատասխանելու համար: 2023 թվականի հուլիսի 1-ից բոլոր IHSS/WPCS խնամակալները, ովքեր չեն ապրում այն խնամք ստացողի հետ, ում համար աշխատում են, կամ IHSS/WPCS խնամակալները, ովքեր չեն բնակվում խնամք ստացողի հետ, պետք է աշխարհագրորեն գրանցվեն ծառայության վայրում: Այս անձինք պետք է բացահայտեն, թե արդյոք նրանք ծառայություններ են մատուցում «համայնքում», թե խնամք ստացողի «տանը»:

EVV-ի փոփոխությունները կազդեն միայն այն խնամակալների վրա, ովքեր չեն բնակվում տանը: Այս փոփոխությունները **չեն** ազդում տանը բնակվող խնամակալների և խնամք ստացողների վրա:

EVV համակարգի թարմացումներ

- EVV համակարգի թարմացումներ՝ TTS և ESP
- Նոր IHSS EVV բջջային հավելված
- Տանը չբնակվող IHSS/WPCS խնամակալները կարող են գրանցվել/դուրսգրվել յուրաքանչյուր աշխատանքային օրվա ընթացքում՝ օգտագործելով հետևյալ տարբերակներից որևէ մեկը.
  - TTS
  - ESP
  - IHSS EVV բջջային հավելված

Ի՞նչ է դա նշանակում

- Աշխարհագրական դիրքը միայն էլեկտրոնային եղանակով կհաստատվի այն ժամանակ, երբ խնամակալը գրանցվում է և դուրս է գալիս «տուն» ընտրելու ժամանակ:
- Աշխարհագրական դիրքը *չի* հավաքվի օրվա ընթացքում, կամ երբ խնամակալը գրանցվելիս կամ հեռանալիս նշում է, որ գտնվում է «համայնքում»:
- TTS-ն էլեկտրոնային եղանակով կստուգի աշխարհագրական դիրքը, երբ խնամակալն օգտագործում է խնամք ստացողի քաղաքային հեռախոսը և զանգահարում է TTS՝ գրանցման և դուրսգրման համար:

Ի՞նչ է դա նշանակում (շարունակություն)

- ***Յուրաքանչյուր աշխատանքային օրվա սկզբում և վերջում*** խնամակալները, ովքեր չեն բնակվում այն խնամք ստացողի հետ, ում ծառայություններ են մատուցում, պետք է գրանցվեն և դուրսգրվեն՝ օգտագործելով նոր IHSS-ի EVV, ESP կամ TTS բջջային հավելվածը:
- Տանը չբնակվող խնամակալներից, ովքեր IHSS և WPCS ծառայություններ են մատուցում IHSS և WPCS ծրագրերի հետ կապված խնամք ստացողին, կպահանջվի գրանցվել և դուրսգրվել երկու ծրագրերից առանձին:
- Չկան տույժեր, եթե խնամակալը սխալ է թույլ տալիս գրանցման և դուրսգրման ժամանակ: Խնամակալները կարող են ուղղել գրառումները մինչև այն պահը, երբ ժամաթերթը հաստատման համար ուղարկեն խնամք ստացողին:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՅՑԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ/ԴՈՒՐՍԳՐՈՒՄ ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ԺԱՄԱԹԵՐԹԻ ՀԱՄԱԿԱՐԳ

Check-In

(833) DIAL-EVV կամ (833) 342-5388

Եկե՛ք սկսենք

CDSS Adult Programs Division

IHSS IN-HOME SUPPORTIVE SERVICES

TTS. Գրանցում

TTS տարբերակով **գրանցվելու** համար տանը չբնակվող IHSS/WPCS խնամակալները պետք է.

- Օգտագործեն խնամք ստացողի քաղաքային հեռախոսը TTS-ում գրանցվելու համար՝ հավաքելով.

  (833) DIAL-EVV կամ **(833) 342-5388**

- Գրանցվեն TTS-ում և մուտք գործեն՝ օգտագործելով իրենց 9 նիշանոց խնամակալի համարը և մուտքի 4 նիշանոց կոդը:

TTS. Հավաքեք

(833) DIAL-EVV or (833) 342-5388

Հեռախոսահամարը հավաքելուց հետո TTS-ը ձեզ կտա հետևյալ հուշումները.

Շնորհակալություն IHSS-ի Հեռախոսային ժամաթերթի համակարգին զանգահարելու համար: Խնդրում ենք ընտրել ձեր նախընտրած լեզուն հետևյալ տարբերակներից, դուք կարող եք կատարել ձեր ընտրությունը ցանկացած ժամանակ:
Անգլերենի համար, սեղմեք «1»
Իսպաներենի համար, սեղմեք «2»
Հայերենի համար, սեղմեք «3»
Չինարենի համար, սեղմեք «4»

TTS. Խնամք ստացողի/ խնամակալի ընտրություն

Ձեր նախընտրած լեզուն ընտրելուց հետո, TTS-ը ձեզ կառաջարկի ընտրել՝ խնամք ստացող եք, թե խնամակալ:

Որպես խնամակալ, հեռախոսի ստեղնաշարի վրա սեղմեք «2»:



TTS. Հիմնական ընտրացանկ

Ձեզ կտեղափոխեն հիմնական ընտրացանկ: TTS-ը ձեզ կտա հետևյալ հուշումը.

Սա հիմնական ընտրացանկն է: Խնդրում ենք ընտրել հետևյալ տարբերակներից մեկը: Ցանկացած ժամանակ կարող եք ընտրություն կատարել.
Մուտք գործելու համար, սեղմեք «1»
Գաղտնաբառը վերականգնելու համար, սեղմեք «2»
Գրանցվելու համար, սեղմեք «3»

TTS. Մուտքագրում

Ձեր TTS հաշիվ մուտք գործելու համար.

Սեղմեք «1» հեռախոսի ստեղնաշարի վրա:

TTS. Խնամակալի և գաղտնաբառի համարը

Մուտք գործելու տարբերակը ընտրելուց հետո TTS-ը ձեզ կտա հետևյալ հուշումները՝ մուտքագրելու ձեր 9 նիշանոց խնամակալի համարը և 4 նիշանոց գաղտնաբառը:

Խնդրում ենք մուտքագրեք ձեր 9 նիշանոց խնամակալի համարը և սեղմեք վանդականիշը (#): Ձեր խնամակալի համարը նշված է ձեր ստացած բոլոր խնամակալի փաստաթղթերում:

Հեռախոսի ստեղնաշարի միջոցով մուտքագրեք ձեր 4 նիշանոց գաղտնաբառը և սեղմեք վանդականիշը (#):

TTS. Գործունեության ընտրացանկ

Ձեր հաշիվ հաջողությամբ մուտք գործելուց հետո դուք կտեղափոխվեք «Գործունեություն» ընտրացանկ: TTS-ը ձեզ կտա հետևյալ հուշումները.

Բարի գալուստ «Գործունեություն» ընտրացանկ:
Սեղմեք «1»՝ այսօրվա ժամանակը մուտքագրելու համար
Սեղմեք «2»՝ նախորդ օրվա ժամը մուտքագրելու համար
Սեղմեք «3»՝ ժամաթերթի պատմությունը վերանայելու համար
Սեղմեք «4»՝ ժամաթերթը խնամք ստացողի վերանայմանը ուղարկելու համար
Սեղմեք «5»՝ մերժված ժամաթերթը դիտելու և գործողություն կատարելու համար

- Սեղմեք «6», որպեսզի գրանցվեք խնամք ստացողի համար
- Սեղմեք «7», որպեսզի դուրսգրվեք խնամք ստացողի համար

- Որպեսզի գրանցվեք խնամք ստացողի համար, սեղմեք «6»:

TTS. Խնամք ստացողի ընտրություն

Դուք կտեղափոխվեք «Ընտրել խնամք ստացողի» տարբերակը: TTS-ը ձեզ կտա հետևյալ հուշումը.

Ցանկանու՞մ եք գրանցվել <Ձեր խնամք ստացողի անունը> համար:
Սեղմեք «1», եթե Այո կամ
Սեղմեք «2», եթե Ոչ

TTS. Խնամք ստացողի ընտրություն (շարունակություն)

Որպեսզի գրանցվեք ձեր ընտրած խնամք ստացողի համար.

Սեղմեք «1», եթե Այո

Եթե ձեր ընտրած խնամք ստացողը կապված է և IHSS-ի և WPCS-ի հետ, և դուք տրամադրում եք և IHSS և WPCS ծառայություններ, դուք պետք է գրանցվեք երկու ծրագրերում առանձին:

TTS. Վայրի ընտրություն տուն կամ համայնք

Հաջորդը, դուք կգնաք գտնվելու վայրի ընտրության տարբերակին: TTS-ը ձեզ կտա հետևյալ հուշումը.

Խնդրում ենք ընտրել այն վայրը, որտեղից գրանցվում եք:
Սեղմեք «1» տան համար կամ
Սեղմեք «2» համայնքի համար

TTS. Գրանցման հաստատում

TTS-ը ձեզ կխնդրի ստուգել՝ արդյոք ձեր գրանցման գրառումը ճիշտ է, կամ եթե ցանկանում եք խմբագրել այն հետևյալ հարցումով.

Դուք գրանցվում եք.

- Խնամք ստացողի անունը
- Խնամք ստացողի գործի համարը
- Ծրագրի տեսակը՝ IHSS կամ WPCS
- Վայրը. տուն կամ համայնք

Եթե ամեն ինչ ճիշտ է, սեղմեք «1» կամ սեղմեք «2»՝ այս գրառումը խմբագրելու համար:

TTS. Գրանցման հաստատում (շարունակություն)

Ստուգելու համար, որ գրանցման տվյալները ճիշտ են.

Սեղմեք «1» ընտրված խնամք ստացողի համար:



Ձեր գրանցումը պահպանվել է: Դուք կվերադառնաք «Գործունեություն» ընտրացանկ:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՅՑԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՅՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ/ԴՈՒՐՍԳՐՈՒՄ

ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ԺԱՄԱԹԵՐԹԻ ՀԱՄԱԿԱՐԳ

Check-Out

(833) DIAL-EVV կամ (833) 342-5388

Եկե՛ք սկսենք

CDSS Adult Programs Division

IHSS IN-HOME SUPPORTIVE SERVICES

TTS. Գործունեության ընտրացանկ

Ձեր TTS հաշիվ հաջողությամբ մուտք գործելուց հետո դուք կտեղափոխվեք «Գործունեություն» ընտրացանկ: TTS-ը ձեզ կտա հետևյալ հուշումը.

Բարի գալուստ «Գործունեություն» ընտրացանկ:
Սեղմեք «1»՝ այսօրվա ժամանակը մուտքագրելու համար
Սեղմեք «2»՝ նախորդ օրվա ժամանակը մուտքագրելու համար
Սեղմեք «3»՝ ժամաթերթի պատմությունը վերանայելու համար
Սեղմեք «4»՝ ժամաթերթը խնամք ստացողին վերանայման ուղարկելու համար
Սեղմեք «5»՝ մերժված ժամաթերթը դիտելու և գործողություն կատարելու համար
Սեղմեք «6», որպեսզի գրանցվեք խնամք ստացողի համար
- Սեղմեք «7», որպեսզի դուրսգրվեք խնամք ստացողի համար

- Որպեսզի դուրսգրվեք խնամք ստացողի համար, սեղմեք «7»:

TTS. Խնամք ստացողի ընտրություն

Դուք կտեղափոխվեք «Ընտրել խնամք ստացողի» տարբերակը: TTS-ը ձեզ կտա հետևյալ հուշումը.

Ցանկանու՞մ եք դուրսգրվել <Ձեր խնամք ստացողի անունը> համար.
Սեղմեք «1»՝ Այո-ի համար կամ
Սեղմեք «2»՝ Ոչ-ի համար

TTS: Խնամք ստացողի ընտրություն (շարունակություն)

Ձեր ընտրված խնամք ստացողի համար դուրսգրում կատարելու համար՝

Սեղմեք «1»՝ Այո պատասխանելու համար:



Եթե ձեր ընտրած խնամք ստացողը կապված է և IHSS-ի և WPCS-ի հետ և դուք տրամադրում եք և IHSS, և WPCS ծառայություններ, դուք պետք է դուրս գաք երկու ծրագրերից առանձին:

TTS. Աշխատավայրի ընտրություն տուն կամ համայնք

Հաջորդը, դուք կգնաք աշխատավայրի ընտրության տարբերակ: TTS-ը ձեզ կտա հետևյալ հուշումը.

Խնդրում ենք ընտրեք աշխատավայրը, որտեղից դուրս եք գրվում:
Սեղմեք «1» տան համար կամ
Սեղմեք «2» համայնքի համար

TTS. Դուրսգրման հաստատում

TTS-ը ձեզ կխնդրի ստուգել՝ արդյոք ձեր դուրսգրման մուտքագրումը ճիշտ է, կամ եթե ցանկանում եք խմբագրել մուտքագրումը հետևյալ հուշումով:

Դուք դուրս եք գրվում.

- Խնամք ստացողի անունը
- Խնամք ստացողի գործի համարը
- Ծրագրի տեսակը՝ IHSS կամ WPCS
- Վայրը՝ տուն կամ համայնք

Եթե այս ճիշտ է, սեղմեք «1» կամ սեղմեք «2»՝ այս գրառումը խմբագրելու համար:

Դուրսգրման տվյալները հաստատելու համար սեղմեք «1»:

TTS. Դուրսգրման հաստատում (շարունակություն)

TTS-ը ձեզ կխնդրի մուտքագրել օրական աշխատած ժամերը հետևյալ հուշումով.

Խնդրում ենք մուտքագրել աշխատած ժամերը որպես երկնիշ թիվ: Օրինակ, եթե չորս ժամ եք աշխատել, մուտքագրեք «04»: Մուտքագրեք աշխատած ժամերը և սեղմեք վանդականիշը (#):

TTS-ը կնշի ձեր մուտքագրած ժամերը և կհարցնի՝ արդյոք դրանք ճի՞շտ են, թե՞ ցանկանում եք խմբագրել մուտքը:

TTS. Դուրսգրման հաստատում (շարունակություն)

Եթե հաստատեք, որ մուտքագրված ժամերը ճիշտ են, TTS-ը ձեզ կխնդրի մուտքագրել րոպեները հետևյալ հուշումով.

Խնդրում ենք մուտքագրել ձեր աշխատած րոպեների թիվը որպես երկնիշ թիվ: Օրինակ, եթե աշխատել եք երեսուն րոպե, մուտքագրեք «30»: Մուտքագրեք ձեր աշխատած րոպեները և սեղմեք վանդականիշը (#):

TTS-ը կնշի ձեր մուտքագրած րոպեները և կհարցնի՝ արդյոք դրանք ճիշտ են, թե ցանկանում եք խմբագրել գրառումը:

Ժամաթերթի ճշգրտումներ

IHSS IN-HOME SUPPORTIVE SERVICES

Ի՞նչ անել, եթե ես մոռանամ գրանցվել կամ դուրսգրվել:

Պարզապես գրանցվեք հենց որ հիշեք: Եթե մոռանաք դուրս գալ, համակարգը ձեր ժամաթերթում կլրացնի 23:59 որպես ավարտի ժամ: Դուք կարող եք կարգավորել ձեր մեկնարկի և ավարտի ժամանակը ձեր ժամաթերթում ցանկացած ժամանակ՝ նախքան ներկայացնելը, TTS-ի գործունեության ընտրացանկի ընտրանքից ընտրելով #2 տարբերակը (Նախորդ օրվա համար ժամանակի մուտքագրում):

Իսկ եթե ես դուրս գրվեմ և վերադառնամ աշխատանքի:

Դուք կարող եք մուտք գործել և կրկին դուրս գալ: Համակարգը կգրանցի մուտքի ամենավաղ ժամը և դուրս գալու վերջին ժամանակը:

Ի՞նչ պետք է անեմ, եթե ժամաթերթը ուղարկեմ իմ խնամք ստացողին և նկատեմ սխալ:

Սա ոչնչով չի տարբերվում այսօրվանից: Ձեր խնամք ստացողը կարող է ցանկացած պահի մերժել ձեր ժամաթերթը՝ նախքան այն հաստատելը:

Արդյո՞ք ես պետք է վերադառնամ խնամք ստացողի տուն, եթե մոռացել եմ դուրսգրվել:

Ոչ, դուք կարող եք պարզապես դուրսգրվել, հենց որ հիշեք, կամ ուղղել այն նախքան ժամաթերթը ներկայացնելը:

Գրանցման կամ դուրսգրման ժամանակ սխալի դեպքում խնամակալների համար տույժեր չեն նախատեսվում: Եթե խնամակալը այլևս չի աշխատում խնամք ստացողի համար, և խնամք ստացողը նշված է որպես նրա ակտիվ խնամք ստացողներից մեկը, խնամակալը պետք է դիմի իր տեղական IHSS շրջանային գրասենյակ հետագա օգնության համար:

ԻՆՉ ՀԻՇԵԼ

- Խնամակալները իրենց ժամաթերթերը կներկայացնեն էլեկտրոնային եղանակով, ինչպես այսօր՝ ESP-ի և/կամ PTS-ի միջոցով:
- Խնամակալները դեռևս վարձատրվում են աշխատած ժամերի համար, այլ ոչ թե ձեր մուտքի և դուրս գալու միջև ընկած ժամանակահատվածի համար:
- Սխալ թույլ տալու համար տույժեր չկան: Խնամակալները կարող են ուղղել գրառումները մինչև այն պահը, երբ ժամաթերթը հաստատման համար ուղարկեն խնամք ստացողին:
- TTS-ի համար խնամակալը պետք է օգտագործի խնամք ստացողի քաղաքային հեռախոսը, երբ զանգահարում է TTS մուտքի և դուրսգրման համար:

Ինչ հիշել (շարունակություն)

- Աշխարհագրական դիրքը միայն էլեկտրոնային եղանակով կհաստատվի այն պահին, երբ խնամակալը մուտք է գործում և դուրս է գալիս խնամք ստացողի տնից:
- Աշխարհագրական դիրքը չի հավաքվի ողջ օրվա ընթացքում կամ երբ խնամակալը նշում է, որ գտնվում է «համայնքում», երբ մուտք է գործում կամ դուրս գալիս:
- Մուտքի և դուրսգրման մասին տեղեկությունները ավտոմատ կերպով կլրացվեն խնամակալի էլեկտրոնային ժամաթերթում:
- **Խնամք ստացողների համար հետևանքներ չկան:** Չեն փոխվում խնամք ստացողի ծառայությունները կամ դրանց մատուցման եղանակը:
- **Խնամք ստացողի հետ տանը բնակվող խնամակալները պարտավոր չեն գրանցվել կամ դուրսգրվել:**

IHSS
IN-HOME SUPPORTIVE SERVICES

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Լրացուցիչ տեղեկությունների և ռեսուրսների համար.
http://www.cdss.ca.gov/inforesources/ESPhelp

IHSS-ի սպասարկման սեղան Էլեկտրոնային ծառայությունների հարթակի և Էլեկտրոնային ժամաթերթերի համար.
(866) 376-7066
Երկուշաբթիից ուրբաթ առավոտյան 8:00-ից մինչև երեկոյան 17:00

Էլեկտրոնային ծառայությունների հարթակ (ESP).
www.etimesheets.ihss.ca.gov

Հեռախոսային ժամաթերթի համակարգ (TTS).
(833) DIAL-EVV կամ (833) 342-5388

CDSS Adult Programs Division